ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/18Շ

ք. Երևան **« 22» օգոստոսի 2019թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի փոխարինող Հ.Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու),մի կողմից, և <<Արգիշտի 1>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս.Դարբինյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Մ-3, Թուրքիայի սահման – Մարգարա – Վանաձոր – Տաշիր - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ112+900-կմ116+900 հատվածի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝

ա) առաջին չափաբաժնի մասով պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 80 օր, բայց ոչ ուշ, քան 10.12.2019թ., իսկ մնացած իրականացվելիք աշխատանքների համար՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 30 օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետ է սահմանվում պատվիրատուի կողմից ողջ ծավալով աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3 տարին:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է

տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 504,999,779 (հինգ հարյուր չորս միլիոն ինը հարյուր իննսունինը հազար յոթ հարյուր յոթանասունինը) ՀՀ դրամ, որից 84,166,630 (ութսունչորս միլիոն հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր երեսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն, իսկ 2019 թվականին իրականացվելիք աշխատանքների գինը կազմում է 307,524,963 (երեք հարյուր յոթ միլիոն հինգ հարյուր քսանչորս հազար ինը հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ, որից 51,254,160 (հիսունմեկ միլիոն երկու հարյուր հիսունչորս հազար հարյուր վաթսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:**Իսկ մնացած աշխատանքների համար վճարումը կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որի վերաբերյալ կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:**

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.
ՎԳ –ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[43] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[44]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

---

[43] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[44] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 18-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[47]

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3, ՀՀ կենտրոնական գանձապետարան ՀԿՀՀ 02578338 Հ/Հ 900011025823 (ստորագրություն) Կ.Տ	«ԱՐԳԻՇՏԻ-1» ՍՊԸ ՀՀ, ք. Վանաձոր, Շիրակի խճուղի 6 «Էկոնոմբանկ» ՓԲԸ Հ/Հ 16600025258401 00 ՀՎՀՀ 06910635 (ստորագրություն) Կ.Տ.

[47] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ փոխանցի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված թիվ 1
« 22» օգոստոսի 2019 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/18Շ ծածկագրով պայմանագրի

ՉԱՓԱԲԱԺԻՆ 1
ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
Մ-3, Թուրքիայի սահման – Մարգարա – Վանաձոր – Տաշիր - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ112+900-կմ116+900 հատվածի հիմնանորոգման աշխատանքների (Ընդհանուր)

/ՀՀ հազ. դրամ/

ՀՀ	Աշխատանքների անվանումը	Չափ. Միավ.	Քանակը	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
	I. Երթևեկելի մաս				
1	Գոյություն ունեցող ա/բետոնե պատվածքի ֆրեզավորում h=5սմ	մ²	51288	0.716	36 722.208
2	Փոսային նորոգում „Բ" տիպ հմիջ=4սմ (3-5սմ)	մ²	510	5.472	2 790.720
3	Հարթեցնող շերտ տաք, մանրահատիկ ա/բետոնից „Բ" տիպ հմիջ.=3սմ	տոն	1084.74	46.930	50 906.848
4	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=5սմ	մ²	51288	5.587	286 546.056
				1.Ընդամենը	**376 965.832**
	II. Մայթեր				
1	Մայթերի եզրերի բուսականության քաղհանում, բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 4.0կմ	մ²	480	0.085	40.800
2	Մայթերի վրա կուտակված գրունտի մաքրում ձեռքով, բարձում և տեղափոխում լցակույտ 4.0կմ	մ³	20	4.530	90.600
3	Մայթերի ա/բետոնե պատվածքի քանդում h=3սմ, բարձում, տեղափոխում լցակույտ 4.0կմ	մ²	12575	0.148	1 861.100
4	Բազալտե եզրաքարերի քանդում (վերադարձ սեփականատիրոջը)	գծ.մ	4333	1.092	4 731.636
5	Բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ չափսի բետոնե հիմքի վրա	գծ.մ	4653	14.595	67 910.535
6	Հավաքովի բետոնե եզրաշար 10x20սմ	գծ.մ	2027	8.135	16 489.645
7	Մայթերի խճային հիմք h=12սմ	մ²	2521	1.968	4 961.328
8	Ավազահատիկ ա/բետոն h=3սմ	մ²	12440	3.640	45 281.600
9	Մետաղական բազրիքների ապատեղակայում	տոն	0.85	26.941	22.900
10	Նույն տեղում III կարգի գրունտի մշակում էքսկավատորով (0.5մ³), բարձում, տեղափոխում լցակույտ 4.0կմ	մ³	50.0	1.886	94.300
11	Նույնը ձեռքով	մ³	5.0	4.524	22.620
				2.Ընդամենը	**141 507.064**
	III. Կողնակներ				
1	Կողնակների խոտաածածկի քաղհանում, բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 4.0կմ	մ²	560	0.085	47.600
2	Կողնակների ամրացում կոպճային խառնուրդով h=10սմ	մ²	3086.0	0.650	2 005.900
				3.Ընդամենը	**2 053.500**
	IV. Ուղիներ				
1	Մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=4սմ	մ²	1828.0	4.486	8 200.400

				4.Ընդամենը	**8 200.400**
	V. Մուտքեր				
1	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	56.8	5.328	302.630
2	Չափազատված խիճ h=12սմ, բիտումի տարածումով, 4.12տ/1000մ²	մ²	1075.2	3.123	3 357.850
3	Մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=4սմ	մ²	2205.0	4.486	9 891.630
				5.Ընդամենը	**13 552.110**
	VI. Վաքեր				
1	Բազալտե եզրաքարերի քանդում (վերադարձ սեփականատիրոջը)	գծ.մ	15	1.095	16.425
2	Վաքի պատի վերականգնում միաձույլ բետոնով B25	մ³	1.5	77.831	116.747
				6.Ընդամենը	**133.172**
	VII.Դիտահորեր				
1	Մայթի վրայի դիտահորի բացակա թուջե կափարիչ d=740մմ	հատ	1	326.936	326.936
2	Մայթի վրա դիտահորի բացակա սալի տեղադրում 1.2x1.2x0.2մ չափսի նոր սալ, թուջե մտոց, թուջե կափարիչով	հատ	1	165.679	165.679
3	Երթևեկելի մասի դիտահորերի սալերի ապատեղակայում	հատ	8	6.562	52.496
4	Դիտահորերի բարձրացում միաձույլ բետոնով B20	մ³	0.7	78.683	55.078
5	Երթևեկելի մասի դիտահորերի սալերի տեղակայում	հատ	8	8.313	66.504
6	Երթևեկելի մասի դիտահորերի վնասված սալերի ապատեղակայում (V=0.24մ3, G=0.6տոն), տեղափոխում լցակույտ 4.0կմ,	հատ	3	6.861	20.583
7	Երթևեկելի մասի դիտահորի սալերի տեղադրում 1.2x1.2x0.2մ չափսի, թուջե մտոց, թուջե կափարիչով	հատ	3	165.679	497.037
				7.Ընդամենը	**1 184.313**
	VIII. Ծառաբներ				
1	10x20սմ չափսի բետոնե եզրաքարերի քանդում, հիմքով	գծ.մ	449	1.092	490.308
2	Բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ չափսի բետոնե հիմքի վրա	գծ.մ	610.6	14.595	8 911.707
3	Կտրված ծառերի կոճղերի հանում d=35սմ	հատ	60	0.891	53.460
4	Բուսահողի տեղափոխում 4կմ-ից	մ³	27.0	1.172	31.644
5	Նոր ծառերի տնկում, բուսահողի լցում նոր տնկվող ծառաբներում	հատ	90	2.824	254.160
				8.Ընդամենը	**9 741.279**
	IX. Հենապատեր				
Ա.	**Բազալտե «քուրք» շարվածքով հենապատերի վերականգնում**				
1	Հենապատի վերականգնում միաձույլ բետոնով B20	մ³	6.94	69.302	480.956
2	Բազալտե «քուրք »շարվածք	մ²	69.25	27.482	1 903.129
Բ.	**Բազալտե սրբատաշ շարվածքով հենապատի վերականգնում (I կամրջի մոտ)**				
1	Բետոնի մեջ (ուղղահայաց) d=24մմ,L=25սմ խորությամբ անցքերի փորում	հատ	10	1.214	12.140
2	Անցքերի մեջ ավազացեմենտե խառնուրդի լցում	մ³	0.001	116.0	0.116
3	խարսխաձողերի տեղադրում L=80սմ-10հատ; Ø16մմ AIII	կգ	12.62	0.632	7.976
4	Հենապատի վերականգնում միաձույլ բետոնով B20	մ³	0.5	69.376	34.688
5	Բազալտե սրբատաշ շարվածք	մ²	1.60	53.961	86.338
6	Բազալտե թասակի տեղադրում բազալտե թասակ 10x50սմ	գծ.մ	2	25.540	51.080
Գ.	**Բետոնե հենապատի վերականգնում (II կամրջի մոտ)**				

1	Հենապատի վերականգնում միաձույլ բետոնով B20	մ³	5.2	69.375	360.750
2	Երեսապատում սվաղով	մ²	13.0	1.887	24.531
				9.Ընդամենը	**2 961.703**
	X. Արհեստական կառուցվածքներ (I և II կամուրջներ)				
1	Երթևեկելի մասի ա/բ պատվածքի քանդում h=5սմ, բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 4.0կմ	մ³	11.7	7.733	90.283
2	Մայթերի ա/բ պատվածքի քանդում h=4սմ և բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 4.0կմ	մ²	65.0	0.175	11.375
3	Բազալտե եզրաքարերի քանդում (վերադարձ սեփականատիրոջը)	գծ.մ	18.0	1.085	19.530
4	Մետաղական բազրիքների ապատեղակայում, (5 հատվածամաս L=3.0մ)	տոն	0.310	26.897	8.338
5	ԵՐ2 հավաքովի եզրաքարերի տեղադրում 100x20x75սմ, V=0.14մ³, G=0.35տոն	գծ.մ	18.0	38.051	684.918
6	Անվահրիչի կրկնակի սվաղում ավազացեմենտե շաղախով	մ²	2.0	1.887	3.774
7	Անվահրիչների ներկում	մ²	80.0	1.064	85.120
8	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=5սմ	մ²	233.5	5.538	1 293.123
9	Ավազահատիկ ա/բետոն h=4սմ	մ²	65.0	4.729	307.385
10	Գոյություն ունեցող մետաղական բազրիքների ներկում	տոն	0.745	18.722	13.948
11	Նոր մետաղական բազրիքների տեղակայում, ներկում - 6 հատվածամաս L=3.0մ	տոն	0.37158	744.558	276.663
				10.Ընդամենը	**2 794.457**
	XI. Բազրիքներ (մայթի եզրին, ստորին հենապատի վրա)				
1	Գոյություն ունեցող ե/բ հավաքովի ձևավոր բազրիքների /472 հատ/ ապատեղակայում, տեղափոխում լցակույտ 4.0կմ	գծ.մ	472	1.717	810.424
2	Նոր տեղերում բազրիքի ներդիր էլեմենտները տեղադրելու համար հենապատի բետոնի քանդում հարվածահատ մուրճով, բարձում, տեղափոխում լցակույտ 4.0կմ	մ³	6.4	48.118	307.955
3	Ներդիր էլեմենտները տեղադրելուց հետո բետոնացում B20	մ³	6.4	72.795	465.888
4	Նոր մետաղական բազրիքների տեղակայում, ներկում	տոն	10.8916	745.195	8 116.366
				11.Ընդամենը	**9 700.633**
	XII. Թեքուղիներ հետիոտնային անցումներում				
1	Բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ չափսի բետոնե հիմքի վրա	գծ.մ	101	14.595	1 474.095
				12.Ընդամենը	**1 474.095**
	XIII. Կահավորում				
Ա.	**Ճանապարհային նշաններ**				
	Ճանապարհային նշանների տեղադրում-68 հատ, սյուների քանակը 36 հատ (2հատ-4.1մ, 34 հատ-3.3մ)				
	Նախազգուշացնող	հատ	2	48.039	96.078
	հատուկ թելադրանքի	հատ	66	41.100	2 712.600
Բ.	**Երթևեկելի մասի նշագծում , լուսանդրադարձիչ գնդիկների օգտագործմաբ 0.35կգ-1մ²**				
	1.1	կմ	1.931	138.633	267.700
	1.5	կմ	4.259	59.420	253.070
	1.6	կմ	1.19	83.866	99.801
	1.2.2	կմ	8.0	89.125	713.000
	1.12	մ²	3.32	2.111	7.009
	1.18	մ²	5.5	2.111	11.611

	1.19	մ²	6.72	2.111	14.186
				13.Ընդամենը	4 175.054
				Ընդհանուրը	574 443.611

*Միավորի արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» ՝ 11% և ԱԱՀ-ն՝ 20%

Մ-3, Թուրքիայի սահման – Մարգարա – Վանաձոր – Տաշիր - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ112+900-կմ116+900 հատվածի հիմնանորոգման աշխատանքների (2019 թ. իրականացվելիք)

/ՀՀ հազ. դրամ/

ՀՀ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Քանակը	Միավորի արժեքը*	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
	I. Երթևեկելի մաս				
1	Գոյություն ունեցող ա/բետոնե պատվածքի ֆրեզավորում h=5սմ	մ²	30910	0.716	22 131.560
2	Փոսային նորոգում „Բ" տիպ հմիջ=4սմ (3-5սմ)	մ²	510	5.472	2 790.720
3	Հարթեցնող շերտ տաք, մանրահատիկ ա/բետոնից „Բ" տիպ հմիջ.=3սմ	տոն	653.75	46.930	30 680.488
4	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=5սմ	մ²	30910	5.587	172 694.170
				1.Ընդամենը	**228 296.938**
	II. Մայթեր				
1	Մայթերի եզրերի բուսականության քաղհանում, բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 4.0կմ	մ²	480	0.085	40.800
2	Մայթերի վրա կուտակված գրունտի մաքրում ձեռքով, բարձում և տեղափոխում լցակույտ 4.0կմ	մ³	20	4.530	90.600
3	Մայթերի ա/բետոնե պատվածքի քանդում h=3սմ, բարձում, տեղափոխում լցակույտ 4.0կմ	մ²	8099	0.148	1 198.652
4	Բազալտե եզրաքարերի քանդում (վերադարձ սեփականատիրոջը)	գծ.մ	2510	1.092	2 740.920
5	Բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ չափսի բետոնե հիմքի վրա	գծ.մ	2734	14.595	39 902.730
6	Հավաքովի բետոնե եզրաշար 10x20սմ	գծ.մ	629	8.135	5 116.915
7	Մայթերի խճային հիմք h=12սմ	մ²	1492	1.968	2 936.256
8	Ավազահատիկ ա/բետոն h=3սմ	մ²	7361	3.640	26 794.040
9	Մետաղական բազրիքների ապատեղակայում	տոն	0.85	26.941	22.900
10	Նույն տեղում III կարգի գրունտի մշակում էքսկավատորով (0.5մ³), բարձում, տեղափոխում լցակույտ 4.0կմ	մ³	50.0	1.886	94.300
11	Նույնը ձեռքով	մ³	5.0	4.524	22.620
				2.Ընդամենը	**78 960.733**
	III. Կողնակներ				
1	Կողնակների խոտաածածկի քաղհանում, բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 4.0կմ	մ²	0	0.085	0.000
2	Կողնակների ամրացում կոպճային խառնուրդով h=10սմ	մ²	0.0	0.650	0.000
				3.Ընդամենը	**0.000**
	IV. Ուղիներ				
1	Մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=4սմ	մ²	1510.0	4.486	8 200.400
				4.Ընդամենը	**8 200.400**
	V. Մուտքեր				
1	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	37.8	5.328	201.398

2	Չափազատված խիճ h=12սմ, բիտումի տարածումով, 4.12տ/1000մ²	մ²	546.0	3.123	1 705.158
3	Մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=4սմ	մ²	1165.7	4.486	5 229.330
				5.Ընդամենը	**7 135.887**
	VI. Վաքեր				
1	Բազալտե եզրաքարերի քանդում (վերադարձ սեփականատիրոջը)	գծ.մ	15	1.095	16.425
2	Վաքի պատի վերականգնում միաձույլ բետոնով B25	մ³	1.5	77.831	116.747
				6.Ընդամենը	**133.172**
	VII.Դիտահորեր				
1	Մայթի վրայի դիտահորի բացակա թուջե կափարիչ d=740մմ	հատ	1	326.936	326.936
2	Մայթի վրա դիտահորի բացակա սալի տեղադրում 1.2x1.2x0.2մ չափսի նոր սալ, թուջե մտոց, թուջե կափարիչով	հատ	1	165.679	165.679
3	Երթևեկելի մասի դիտահորերի սալերի ապատեղակայում	հատ	8	6.562	52.496
4	Դիտահորերի բարձրացում միաձույլ բետոնով B20	մ³	0.7	78.683	55.078
5	Երթևեկելի մասի դիտահորերի սալերի տեղակայում	հատ	8	8.313	66.504
6	Երթևեկելի մասի դիտահորերի վնասված սալերի ապատեղակայում (V=0.24մ3, G=0.6տոն), տեղափոխում լցակույտ 4.0կմ,	հատ	3	6.861	20.583
7	Երթևեկելի մասի դիտահորի սալերի տեղադրում 1.2x1.2x0.2մ չափսի, թուջե մտոց, թուջե կափարիչով	հատ	3	165.679	497.037
				7.Ընդամենը	**1 184.313**
	VIII. Ծառաբներ				
1	10x20սմ չափսի բետոնե եզրաքարերի քանդում, հիմքով	գծ.մ	406	1.092	443.352
2	Բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ չափսի բետոնե հիմքի վրա	գծ.մ	494.1	14.595	7 211.390
3	Կտրված ծառերի կոճղերի հանում d=35սմ	հատ	60	0.891	53.460
4	Բուսահողի տեղափոխում 4կմ-ից	մ³	27.0	1.172	31.644
5	Նոր ծառերի տնկում, բուսահողի լցում նոր տնկվող ծառաբներում	հատ	90	2.824	254.160
				8.Ընդամենը	**7 994.006**
	IX. Հենապատեր				
Ա.	**Բազալտե «քուրք» շարվածքով հենապատերի վերականգնում**				
1	Հենապատի վերականգնում միաձույլ բետոնով B20	մ³	6.94	69.302	480.956
2	Բազալտե «քուրք »շարվածք	մ²	69.25	27.482	1 903.129
Բ.	**Բազալտե սրբատաշ շարվածքով հենապատի վերականգնում (I կամրջի մոտ)**				
1	Բետոնի մեջ (ուղղահայաց) d=24մմ,L=25սմ խորությամբ անցքերի փորում	հատ	0	1.214	0.000
2	Անցքերի մեջ ավազացեմենտե խառնուրդի լցում	մ³	0.000	116.0	0.000
3	խարսխաձողերի տեղադրում L=80սմ-10հատ; Ø16մմ AIII	կգ	0.00	0.632	0.000
4	Հենապատի վերականգնում միաձույլ բետոնով B20	մ³	0.0	69.376	0.000
5	Բազալտե սրբատաշ շարվածք	մ²	0.00	53.961	0.000
6	Բազալտե թասակի տեղադրում բազալտե թասակ 10x50սմ	գծ.մ	0	25.540	0.000
Գ.	**Բետոնե հենապատի վերականգնում (II կամրջի մոտ)**				
1	Հենապատի վերականգնում միաձույլ բետոնով B20	մ³	0.0	69.375	0.000
2	Երեսապատում սվաղով	մ²	0.0	1.887	0.000

				9.Ընդամենը	2 384.084
	X. Արհեստական կառուցվածքներ (I և II կամուրջներ)				
1	Երթևեկելի մասի ա/բ պատվածքի քանդում h=5սմ, բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 4.0կմ	մ³	7.875	7.733	60.897
2	Մայթերի ա/բ պատվածքի քանդում h=4սմ և բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 4.0կմ	մ²	45.0	0.175	7.875
3	Բազալտե եզրաքարերի քանդում (վերադարձ սեփականատիրոջը)	գծ.մ	0.0	1.085	0.000
4	Մետաղական բազրիքների ապատեղակայում, (5 հատվածամաս L=3.0մ)	տոն	0.000	26.897	0.000
5	ԵՐ2 հավաքովի եզրաքարերի տեղադրում 100x20x75սմ, V=0.14մ³, G=0.35տոն	գծ.մ	0.0	38.051	0.000
6	Անվահրիչի կրկնակի սվաղում ավազացեմենտե շաղախով	մ²	2.0	1.887	3.774
7	Անվահրիչների ներկում	մ²	58.0	1.064	61.712
8	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=5սմ	մ²	157.5	5.538	872.235
9	Ավազահատիկ ա/բետոն h=4սմ	մ²	45.0	4.729	212.805
10	Գոյություն ունեցող մետաղական բազրիքների ներկում	տոն	0.745	18.722	13.948
11	Նոր մետաղական բազրիքների տեղակայում, ներկում -6 հատվածամաս L=3.0մ	տոն	0.37158	744.558	276.663
				10.Ընդամենը	1 509.909
	XI. Բազրիքներ (մայթի եզրին, ստորին հենապատի վրա)				
1	Գոյություն ունեցող ե/բ հավաքովի ձևավոր բազրիքների /472 հատ/ ապատեղակայում, տեղափոխում լցակույտ 4.0կմ	գծ.մ	472	1.717	810.424
2	Նոր տեղերում բազրիքի ներդիր էլեմենտները տեղադրելու համար հենապատի բետոնի քանդում հարվածահատ մուրճով, բարձում, տեղափոխում լցակույտ 4.0կմ	մ³	6.4	48.118	307.955
3	Ներդիր էլեմենտները տեղադրելուց հետո բետոնացում B20	մ³	6.4	72.795	465.888
4	Նոր մետաղական բազրիքների տեղակայում, ներկում	տոն	10.8916	745.195	8 116.366
				11.Ընդամենը	9 700.633
	XII. Թեքուղիներ հետիոտնային անցումներում				
1	Բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ չափսի բետոնե հիմքի վրա	գծ.մ	68	14.595	992.460
				12.Ընդամենը	992.460
	XIII. Կահավորում				
Ա.	**Ճանապարհային նշաններ**				
	Ճանապարհային նշանների տեղադրում-68 հատ, սյուների քանակը 36 հատ (2հատ-4.1մ, 34 հատ-3.3մ)				
	Նախազգուշացնող	հատ	2	48.039	96.078
	հատուկ թելադրանքի	հատ	56	41.100	2 301.600
Բ.	**Երթևեկելի մասի նշագծում , լուսանդրադարձիչ գնդիկների օգտագործմաբ 0.35կգ-1մ²**				
	1.1	կմ	1.841	138.633	255.223
	1.5	կմ	2.699	59.420	160.375
	1.6	կմ	0.94	83.866	78.834
	1.2.2	կմ	4.444	89.125	396.072
	1.12	մ²	3.32	2.111	7.009

	1.18	մ²	5.5	2.111	11.611
	1.19	մ²	6.72	2.111	14.186
				13.Ընդամենը	**3 320.986**
				Ընդհանուրը	**349 813.520**

*Միավորի արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» ՝ 11% և ԱԱՀ-ն՝ 20%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
Հ/Հ 900011025823

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՐԳԻՇՏԻ-1» ՍՊԸ
ՀՀ, ք. Վանաձոր, Շիրակի խճուղի 6
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660002525840100
ՀՎՀՀ 06910635

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 2
« 21 » օգոստոսի 2019 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/18Շ ծածկագրով պայմանագրի

ՁԱՓԱԲԱԺԻՆ 1
ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
Մ-3, Թուրքիայի սահման – Մարգարա – Վանաձոր – Տաշիր - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ112+900-կմ116+900 հատվածի հիմնանորոգման աշխատանքների կատարման
(2019 թ. իրականացվելիք)

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		սկիզբը	ավարտը
0	Լաբորատոր փորձարկումներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 120 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
1	Երթևեկելի մաս	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
2	Մայթեր	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
3	Ուղիներ և մուտքեր	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 105 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
5	Վաքեր	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 40 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
6	Դիտահորեր	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 50 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
7	Ծառաբներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 85 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը

8	Հենապատեր	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 55 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
9	Արհեստական կառուցվածքներ (I և II կամուրջներ)	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 80 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
10	Անվտանգության էլեմենտներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 120 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո**	**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 120 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը**

(Հետագայում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում)

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		սկիզբը	ավարտը
0	Լաբորատոր փորձարկումներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրի ուժի մեջ մտնելուց 60 օր հետո
1	Երթևեկելի մաս	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրի ուժի մեջ մտնելուց 50 օր հետո
2	Կողնակներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրի ուժի մեջ մտնելուց 50 օր հետո
3	Ուղիներ և մուտքեր	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրի ուժի մեջ մտնելուց 55 օր հետո
7	Ծառաբներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրի ուժի մեջ մտնելուց 45 օր հետո
8	Հենապատեր	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրի ուժի մեջ մտնելուց 50 օր հետո
9	Արհեստական կառուցվածքներ (I և II կամուրջներ)	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում

		կողմերի միջև կնքվող համաձայնագիրի ուժի մեջ մտնելուց հետո	կողմերի միջև կնքվող համաձայնագիրի ուժի մեջ մտնելուց 55 օր հետո
10	Անվտանգության էլեմենտներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրի ուժի մեջ մտնելուց 60 օր հետո
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		**Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրի ուժի մեջ մտնելուց հետո**	**Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրի ուժի մեջ մտնելուց 60 օր հետո**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
Հ/Հ 900011075823

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՐԳԻՇՏԻ-1» ՍՊԸ
ՀՀ, ք. Վանաձոր, Շիրակի խճուղի 6
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660002525840100
ՀՎՀՀ 06910635

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
« 22 » օգոստոսի 2019 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/18Շ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231177/23 45231177/527		...	...	...	...	...	...	—	123 009 985.0	123 009 985.0	307 524 963.0	307 524 963.0	307 524 963.0	307 524 963.0

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
ՀՀ 900011025823
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ԱՐԳԻՇՏԻ-1» ՍՊԸ
ՀՀ, ք. Վանաձոր, Շիրակի խճուղի 6
«Էվոկաբանկ» ՓԲԸ
ՀՀ 1660002525840100
ՀՎՀՀ 06910635
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 4
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը
Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը
պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն